ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 3
«20» հունվարի 2020թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ՄԱՐԶՊԵՏ Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Ոսկեհատի ավագանու 16.01.2020թ. N1, N2, N3, N4, N5, և N6 որոշումները:

Համայնքի ղեկավար Գ. Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ոսկեհատ, (077)603204, voskehat.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 1

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով '' Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 14 - րդ հոդվածի 6 - րդ կետի պարբերությամբ համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել ներկայացված օրակարգի հարցերը.

1. Ոսկեհատ համայնքի 2019թ. տարեկան բյուջեի 4 - րդ եռամսյակի կատարողականի մասին:

2. Ոսկեհատ համայնքում 2020թ տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին:

3. Ոսկեհատ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:

4. Ոսկեհատի համյնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:

5. Ոսկեհատ համայնքի 2020թ. տարեկան բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿԱՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ոսկեհատ, (077)603204, voskehat.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 2

## ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 4 - ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 38 - րդ հոդվածի 1 - ին մասի,,, Բյուջետային համակարգի մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով համայնք ավագանին **որոշում է՝**

Ի գիտություն ընդունել 2019թ. համայնքի բյուջեի 4 - րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը

| | Վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդամենը |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 26183,1 | 7604,4 | 32528,0 |
| Ծախսային մաս | 21940,5 | 4259,2 | 26199,7 |

Կողմ 3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ՌՈՄԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿԱՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ոսկեհատ, (077)603204, voskehat.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 3

## ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 1 8 -րդ հոդվածի 1 - ին մասի 18 - րդ կետով և ,,տեղական տուրքերի և վճարների մասին'' ՀՀ օրենքի 9 - րդ, 10 - րդ, 11 - րդ և 12 - րդ հոդվածներով համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Ոսկեհատ համայնքի 2020թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿԱՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

հավելված
ՀՀ Արագածոտն մարզի Ոսկեհատ
համայնքի ավագանու
16.01.2020թ. N3 որոշման

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար. ·

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի ,աե ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ.

Համայնքի ղեկավար Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ոսկեհատ, (077)603204, voskehat.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 4

## ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով '' տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 1 8 -րդ հոդվածի 11 - րդ կետով Ոսկեհատ համայնք ավագանին որոշում է՝

Հաստատել Ոսկեհատ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը 210000 դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿԱՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ոսկեհատ, (077)603204, voskehat.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 5

## ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 28 - րդ կետով և ,,համայնքային ծառայության մասին'' ՀՀ օրենքի 27 - րդ հոդվածի պահանջով համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Ոսկեհատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿԱՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտն մարզի
Ոսկեհատ համայնքի ավագանու
16.01.2020 N5 որոշման

## ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 10.5

| Հ/Հ | Պաշտոնը | Միավոր | Դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 210000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 140000 |
| | Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| 1 | 1.2-1 աշխատակազմի քարտուղար | 1 | 145000 |
| 2 | 3.1-1 առաջատար մասնագետ | 1 | 130000 |
| 3 | 3.1-2 առաջատար մասնագետ | 1 | 130000 |
| 4 | 3.1-3 առաջատար մասնագետ | 1 | 130000 |
| | Սպասարկող անձնակազմ | | |
| 1 | Գրադարանավար | 1 | 89610 |
| 2 | Մշակույթի տան տնօրեն | 1 | 89610 |
| 3 | Գյուղապետարանի վարչ. շենքի պահակ | 1 | 89610 |
| 4 | Հակ. կայանի պահակ | 1 | 89610 |
| 5 | Վարչական շենքի հավաքարար | 0.5 | 44805 |

Պայմանագրային ծառայող

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Անասնաբույժ | | 44805 |

Համայնքի ղեկավար Գ. Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ոսկեհատ, (077)603204, voskehat.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 6

## ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ղեկավարվելով '' տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին մասի 5 - րդ կետով համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Ոսկեհատ համայնքի 2020թ. տարեկան բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԿԱՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտն մարզի

Ոսկեհատ համայնքի ավագանու

16.01.2020թ. N6 որոշման

Հողի հարկ – 1515.0

Գույքահարկ ( շին) – 580.0

Գույքահարկ (մեք) – 3274.0

Տեղական տուրք - 60.0

Հողի վարձավճար – 1118.0

Դոտացիա - 20788.0

Աղբահանություն – 570.0

Այլ դրամաշնորհ – 200.0

01-1-1

Աշխատավարձ – 16030.0

Էլ. էներգիա - 876.3

Ապահովագրություն - 25.0

Կապի ծառայության վճար - 230.0

Գործուղում - 200.0

Տեղ. ծառայություն - 150.0

Մեք. ընթ. նորոգում - 200.0

Գրասենյակային նյութեր – 200.0

Հատուկ նպ. նյութեր - 400.0

Վարչ. սարք. 500.0

Ընդ. բնույթի հանրային ծառայություն – 100.0

Տրանս. նյութեր – 500.0

Ոչ նյութական ակտիվներ – 350.0

Պարգևատրում-1962.9

Վերապատրաստման նյութեր – 80.0

01-6-1

Էլ. էներգիա - 400.0

Աշխատավարձ - 1075.4

Մասնագիտական ծառայություն – 400.0

Նվիրատվություն այլ կազմ - 50.0

Կառ .ծառ. 600.0

Ընդհանուր բնույթի ծառայություն -100.0

10-7-1

Այլ նպ. բյուջեից – 1200.0

Աղքահանություն – 900.0

Ոռոգում – 500.0

Պահուստային ֆոնդ - 1400.0

01-3-3

Համ. ծառայություն – 150.0

4-2-1

Աշխատավարձ - 775.4

8-2-4

Ընդհանուր բնույթի ծառայություններ մշ. կազմ 100.0

04-3-2

Գազաֆիկացում – 5855.6

Համայնքի ղեկավար Գ.Ա.Սարգսյան